ԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ ԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ՂԱԶԱՐՅԱՆ Գ. Ա., ԱՎԵՏԻՍՅԱՆ Հ. Վ.

Գրագողությունը գիտության, արվեստի և առհասարակ նորարարության ոլորտում կիրառվող հնարք է, որը բնորոշվում է «ուրիշի մտավոր սեփականությունն ապօրինաբար յուրացնելու» գործելակերպով: Գրագողությունը թույլ է տալիս ֆորմալ՝ ձևական մակարդակում մրցակցություն ապահովել, սակայն արդյունքը մնում է զուտ փաստաթղթային մակարդակում:

Գրագողության գործելակերպը դիտարկվում է արագ արդյունքի հասնելու և անհատի կրթական նվաճումներում ձև-բովանդակություն կապի խզման համատեքստում: Նշված կապի խզումը պայմանավորված է աշխատաշուկայում աշխատատուի մոտ դիմորդի կրթությունը փաստող հավաստագրերի գործառականության և ազդեցության ցածր մակարդակով:

Հայաստանում այս խնդրի հասարակագիտական տեսանկյունից կատարված դիտարկումներից կարելի է եզրակացնել, որ մեր բուհական համակարգում ամբողջությամբ չեն գիտակցված գրագողության հետևանքները, գոյություն չունի երևույթի նկատմամբ մեկ ընդհանուր ինստիտուցիոնալ մոտեցում, իսկ բուհական համակարգը ուսանողին բավարար չափով չի իրազեկում գրագողության վտանգների մասին[1]: Հետևաբար ունենում ենք փաստաթղթային կեղծիք, քանի որ գրագողության մեթոդով ստեղծված աշխատանքները ուսանողի կամ գիտական աստիճանի հայցորդի համար այն փաստական հիմքն են, որ վերջինիս թույլ էին տալիս որոշակի գիտական աստիճանի հասնել կամ կոչում ձեռք բերել: Իրավական առումով, սակայն, կարելի է գտնել ինչպես հեղինակի կարգավիճակի՝ փոխանցվող չլինելու, այնպես էլ փաստաթղթերի կեղծման համար մինչև իսկ քրեական պատասխանատվություն ենթադրող դրույթներ:

Տեխնիկական առումով գիտական աստիճանի ապօրինի յուրացման ճանապարհները մի քանիսն են՝ (ա) այլ անձի հեղինակած աշխատանքի ձեռքբերում կամ (բ) գրագողություն: Ընդ որում, գործնականում հնարավոր է նաև երրորդ տարբերակը՝ (գ) այլ անձի կողմից գրագողությամբ իրականացված աշխատանքի ձեռքբերումը[2]: Գրագողության այս հնարավոր մեխանիզմները հաշվի առնելով՝

---

[1] *Գրագողությունը հայաստանյան բուհերում. ինչպես քանդել թնջուկը, Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Լեզու, հասարակություն, հաղորդակցություն 1 (2), Ե., 2012:*

[2] *Երբեմն գիտական աշխատանքում տեղ գտած մեջբերումը կատարվում է պլագիատից: Այս մասնավոր դեպքերի մասին ավելի մանրամասն տե՛ս* Darde, J-N. *La culture du plagiat au cœur de la 71e*

նկատենք նաև, որ տվյալ երևույթը լեզվաբանական տեսանկյունից հաճախ քննարկվում է պարաֆրազի և մեջբերման հնարների հետ մեկտեղ՝ իբրև դրանց հարակից հասկացություն[3]:

Տեսականորեն նշված խնդիրը, որը ոչ այնքան տեխնիկական է, որքան գլոբալ՝ մենթալիտետային, բխում է հասարակության մեջ գիտելիքի նկատմամբ տրամադրվածությունից և գիտելիք-նվաճում կապի ըմբռնումից: Այլոց մտավոր սեփականության հաշվին «առաջ գնալը» որպես բացասական երևույթ չի գիտակցվում, եթե առկա են այլ՝ ավելի խոշոր, համակարգային բացեր, որոնք անձին թույլ են տալիս սեփական խղճի առջև արդարացում գտնել՝ գրագողության միջոցով որոշակի մասնագիտական աստիճանի կամ դիրքի հասնելուց հետո:

*Իրավական տեսանկյունից խնդրի արմատները, ըստ էության, կարելի է գտնել «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում[4], որի վեցերորդ և ութերորդ հոդվածների դրույթները կամա թե ակամա արտացոլում են նշված հակասությունը. **Հոդված 6.** «Հեղինակը». Հեղինակ է ճանաչվում այն ֆիզիկական անձը, ով ստեղծել է ստեղծագործությունը: [...] **Հոդված 8.** «Հեղինակային կանխավարկածը». Հեղինակ է ճանաչվում այն անձը, ում անունը որպես հեղինակ նշված է ստեղծագործության վրա, կամ ում անունը որպես հեղինակ նշված է ստեղծագործությունը հրապարակելիս, կամ ում անունը որպես հեղինակ նշված է գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող համապատասխան կազմակերպությունում, կամ նոտարի մոտ, կամ օրենքով համապատասխան լիազորություն ունեցող այլ կազմակերպություններում ի պահ հանձնված ստեղծագործության օրինակի վրա, քանի դեռ հակառակն ապացուցված չէ: Սույն դրույթը կիրառվում է նաև այն դեպքերում, երբ այդ անունը կեղծանուն է, և կեղծանունով հանդես եկող հեղինակի անձը կասկած չի հարուցում»:*

Նշված դրույթների հակասությունն իրավական դաշտում որոշակի անհստակություն է առաջացնում, ուստի ոլորտի վերահսկելիությունը մնում է առանձին կրթական կառույցների ամենաբարդ առաջադրանքների շարքում: Այս իրավիճակում գիտական աստի-ճանաշնորհման համակարգը ամբողջությամբ ստանձնում է յուրատեսակ զտիչի դեր (մշակութային ուսումնասիրություններում նման զտող մեխանիզմները կոչվում են gate-keeper)՝ կրելով գիտության ասպարեզ ներթափանցող նորանոր կադրերի ստեղծման և դրանից բխող հետևանքների պատասխանատվությունը:

---

section du CNU: [1] Des comitns de snlection, facteurs de contamination, 2013, http://archeologie-copier-coller.com/? p=9424:

[3] **Eco Um.** *Come si fa una tesi di laurea, Milano: Bompiani, 2006, p. 180.*

[4] *«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 15.06.2006.*

Տեխնիկական լուծումներ: *Առանձին զտող մեխանիզմները, տվյալ պարագայում՝ գիտական աստիճան շնորհող կառույցները հնարավորություն ունեն կիրառելու նորագույն ծրագրային համակարգեր՝ գրագողության դեպքերի բացահայտման նպատակով: Օրինակ՝ ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովը սկսել է թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների տեքստերում գրագողության դեպքերը որսացող ծրագրային հատուկ համակարգեր կիրառել: Դրանք գործի դրվելուն պես տասնյակ հայցորդների ատենախոսություններ մերժվել և վերադարձվել են՝ աշխատանքում տեղ գտած պատճենումների առկայության փաստական հիմնավորմամբ: Այդ համակարգերից է, օրինակ, Plagiarism Detector ծրագրային համակարգը, որը թույլ է տալիս երևակել և պարզել գիտական տեքստում տեղ գտած միջտեքստային հղումների և արտագրված հատվածների համամասնությունը (տե՛ս պատկեր 1):*



Պատկեր 1

Համակարգային լուծումներ: *Ֆրանսիայում Համալսարանների ազգային խորհուրդը (Conseil National des Universitтs) սահմանել է հստակ վարչարարական և իրավական պատժամիջոցներ, համաձայն որոնց գրագողության հայտնաբերման պարագայում գիտական աշխատանքը, որպես այդպիսին, չեղարկվում է: Մասնավորապես, օրինակ, Լիոնի համալսարանում, 2000-ական թվականից սկսած՝ պաշտպանության երաշխավորվող ավարտական աշխատանքները ստուգվում են «նմանությունների հայտնաբերման ծրագրային համակարգերի» միջոցով: Խրախուսվում է չհաստատել այն դիպլոմայինները, որոնք գրվել են համացանցի ի հայտ գալուց հետո և պարունակում են գրագողության փաստացի նշաններ[5]: Որոշ հաստատություններում սահմանվում են նաև բարոյական պատժամիջոցներ, որոնք հարվածում են գրագողություն կատարած անձի հեղինակությանը[6]:*

---

[5] *Սրա մասին ավելի մանրամասն տե՛ս Le Monde-ի հետևյալ հրապարակումը՝ «Plagiat: la copie pointтe à l'université», Le Monde/21.05.2010, www.lemonde.fr/ societe/article/2010/05/21/plagiat-la-copie-pointee-a-l-universite_1353840_3224.html*

[6] *Սրա մասին ավելի մանրամասն տե՛ս Le plagiat / Les sanctions administratives/ La sanction morale, Université Bretagne Loire http://guides-formadoct.ueb.eu/content. php?pid=224621&sid=1862805:*

Ինքնին հասկանալի է, որ գրագողության խնդրի լուծումները խոշոր հաշվով պետք է անդրադառնան կրթական համակարգի, որակի և արդյունավետության վրա, ուստի տրամաբանական է, որ դրանք սկիզբ առնեն հենց համակարգային մակարդակից, որտեղ, կարծում ենք, կարևոր դեր կարող են ունենալ՝

ա. ներբուհական և միջբուհական հատուկ խորհուրդները, որոնք կարգելեն կեղծ գիտական աշխատանքներ վաճառող բիզնեսների մուտքը համալսարաններ, եթե ոչ առհասարակ դրանց գործունեությունն ու քարոզը բուհերին կից տարածքներում: Այս հարցով ավելորդ չէր լինի նաև բուհերի սերտ համագործակցությունը ՀՀ ոստիկանության հետ, որի՝ այլնայլ ոլորտների բազմաթիվ խախտումներին աչալուրջ աչքից կարծես վրիպել է ապօրինի գիտական արտադրանք ստեղծող կազմակերպությունների հարցը.

բ. համակարգային կրթական հատուկ չափանիշների սահմանումը, որոնց առանցքում դրված ընհանուր մոտեցմամբ շեշտը կդրվի ոչ թե ներկայացվող բուհական և հետբուհական մակարդակի գիտական աշխատանքների ծավալային, այլ որակական հատկանիշների վրա, քանի որ տրամաբանական է, որ մեծ ծավալների դեպքում պլագիատի հավանականությունը համապատասխանաբար մեծանում է, մինչդեռ համակարգի կողմից համեմատաբար սեղմ ծավալի ակնկալիքները անձի համար կարող են ծառայել որպես անուղղակի խրախուսական միջոց, որպեսզի նա արդյունքի հասնի ինքնուրույն աշխատանքի միջոցով.

գ. հետպաշտպանական պարտադիր ատեստավորման չափանիշների սահմանումը, որի հիման վրա ԲՈՀ-ը կկարողանա պահանջել ատենախոսության թեմայի վերաբերյալ գիտական զեկուցումներ՝ բուն պաշտպանությանը հաջորդող մի քանի տարիների ընթացքում: Այդպիսով, ավելի հեշտ կլինի պարզել, թե, օրինակ, թեկնածուական կամ դոկտորական աստիճանի հասած անձն իրականում որքանով է տիրապետում իր նեղ մասնագիտական թեմային:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ գրագողության դեպքերի հավանականության նվազումն ու գործնականում արտագրված աշխատանքների թվի կրճատումը կապված են համալիր մեթոդաբանության մշակման և կիրառման հետ, որում փոխլրացնող կերպով պետք է առկա լինեն համակարգային, տեխնիկական և կրթական-ծրագրային բաղադրիչները: Փորձը ցույց է տալիս, որ բարձրագույն և հետբուհական կրթության մակարդակներում նորագույն ծրագրային լուծումներով հագեցած զտիչ համակարգերի կիրառումը կարող է որոշակի դրական արդյունքի հանգեցնել՝ ծառայելով որպես գրագողության դեպքերի կրճատման միջոց[7]: Մյուս կողմից պետք է նշել, որ խնդրի վերլուծությունն ու լուսաբանումն անհրաժեշտ է

---

[7] *Նման ծրագրային համակարգ է կիրառվում, օրինակ, ԵՊՀ ռոմանա-գերմանական բանասիրության ֆակուլտետի անգլիական բանասիրության ամբիոնում:*

լրացնել նաև պլագիատի առանձնահատկությունների և դրանից խուսափելու վերաբերյալ տեսական և գործնական դասընթացներով[8], որոնք նախատեսված կլինեն ինչպես ուսանողների, այնպես էլ ԲՈՒՀ-երի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների համար:

О МЕТОДАХ ПРЕДОТВРАЩЕНИЯ ПЛАГИАТА В НАУЧНОМ ДИСКУРСЕ

КАЗАРЯН Г. А., АВЕТИСЯН Г. В.

Резюме

Предотвращение плагиата – одна из труднейших задач в системе образования в целом и в армянских высших учебных заведениях, в частности. Анализ правовой и этической составляющей плагиата в Армении показывает, что данное явление служит средством легкого достижения карьерных целей в научной сфере. Технические и системные решения проблемы в равной мере связаны с применением детекторов плагиата и с пересмотром критериев оценки научных работ в ВУЗ-ах.

ON THE METHODS OF PREVENTING PLAGIARISM IN SCIENTIFIC DISCOURSE

G. GHAZARYAN, H. AVETISYAN

Abstract

The problem of plagiarism is among the biggest challenges for the modern educational systems in general and the Armenian higher educational establishments in particular. The analysis of the legal and ethical aspects of plagiarism in Armenia demonstrates that the latter serves as an easy way of achieving career objectives in the scientific sphere. The technical and systematic solutions of the problem at the HEE are connected with the application of plagiarism detection tools on the one hand, and with the revision of the criteria of scientific product assessment on the other.

[8] **Ղազարյան Գ.,** *Գրագողության դեմ պայքարը սկսված է (Երևանի համալսարան, դեկտեմբեր, 2014):*